ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ
ՄԱՐՄՆԻ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՊԵՏ՝ ԳԱՌՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Գրիգորյան,

Հայտնում եմ Ձեզ, որ 2025 թվականին հունիսի 27-ից մինչև սեպտեմբերի 26-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ Արմավիրի մարզի բուսասանիտարական մոնիթորինգի շրջանակներում թվով 21 բնակավայրերում իրականացրել եմ մոնիթորինգ բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերման, նմուշառման և ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ փորձաքննության ներկայացնելու նպատակով: Այդ գործընթացի ընթացքում իրականացրել եմ 137 նմուշառում, որը լաբորատորիայի կողմից կատարվել է թվով 302 փորձաքննություն: Արդյունքում հայտնաբերվել է կալիֆորնյան վահանակիր, խաղողի ֆիլոքսերա, արևելյան պտղակեր, լոլիկի ցեց, արևմտյան ծաղկային թրիփս, սալորենու օսպա, պտուղների բակտերիալ այրվածք, գաղձեր կարանտին վնասակար օրգանիզմներ:

Հունիս-հուլիս ամիսներին հիմնական այցելություններս, կապված ՀՀ-ում արտադրված արտահանվող ծաղիկների հետ առաջացած խնդիրների պատճառով, իրականացրել եմ մարզում ծաղկի արտադրության ջերմատներում:

2025թ օգոստոսի 08-ի N 1474-Ա ՍՍՏՄ ղեկավարի հրամանի համաձայն մարզում գործող պեստիցիդների և ագրոքիմիկատների իրացմամբ զբաղվող շուրջ 40 տնտեսվարող սուբյեկտների մոտ մասնակցել եմ դիտարկման գործընթացին, ինչի արդյունքում թունաքիմիկատների որակական ցուցանիշների համապատասխանությունը պարզելու նպատակով ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ լաբորատոր փորձաքննությունը պարզելու նպատակով ՀԱԲԼԾԿ ՊՈԱԿ լաբորատոր փորձաքննության է ներկայացվել թվով 82 թունաքիմիկատների նմուշներ:

Մասնակցել եմ նաև մարզում իրականացվող անասնահամաճարակային մշտադիտարկումներին:

ՍՍՏՄ Արմավիրի մարզային կենտրոնի փորձագետ Մ.Մարկոսյան

29.09.2025թ.